

ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ԵՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԻՆ ՀԱՆԴԵՊ

«Տանդ հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս զիս պիտի այրէ» (Յի. 2.17): Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Իսկապէս Աստուծոյ տունին, այսինքն՝ եկեղեցիին նախանձախնդրութիւնը բոցավառեցաւ Յիսուսի սրտին մէջ, որ սիրեց զայն եւ իր կեանքը ընծայաբերեց անոր համար, որպէսզի յաւիտեանական կեանքը պարգեւէ անոր եւ որպէսզի զայն իր փառքին մասնակից դարձնէ»: Այսօր, մենք որքանով նախանձախնդիր ենք Աստուծոյ եկեղեցիին հանդէպ: Հոն ոչխարներ չկան, բայց ոչխարի մորթով գայլեր կան: Հոն եկեղեցիին պղծող լուծայնափոխներ չկան, բայց կան Աստուծմէ աւելի դրամը սիրող մարդիկ: Աստուծոյ տան մէջ կան ահաւոր մեղքեր. եթէ մարդիկ շարունակեն լուռ մնալ անոնց նկատմամբ թող քաջ գիտնան, որ Աստուած պիտի չշարունակէ լուռ մնալ, այլ նիշդ ժամանակին պիտի միջամտէ:

ՀԱԻԱՏՔՈՎ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Հոգի Աստուծոյ, ճշմարիտ Աստուած, որ Յորդանան գետի վրայ եւ վերնատունը իջար եւ զիս լուսաւորեցիր Սուրբ Աւագանին մկրտութեամբ: Մեղանչեցի երկինքի դէմ, քու առջեւ: Վերստին մաքրէ զիս քու աստուածային կրակովդ, ինչպէս հրեղէն լեզուներով մաքրեցիր սուրբ առաքեալները եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս: Ն. Շնորհալի

ԵԹԷ ԿԱՄ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ'ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԼ ՈՒ ՆԵՐԲՈՂԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ, ԿԱՐԴԱՆՔ՝ Սաղմոս 8

Ո՛վ Տէ՛ր, մեր Տէ՛րԸ, ի՞նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիւսեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լուրջեան մատնես թշնամիներդ եւ հակառակակորդներդ: Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ, ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կուտաս անոր:

Ձայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր, քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները, երկինքի թռչուններն ու ծովուն ձուկները եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛վ Տէ՛ր, մեր Տէ՛րը,

ի՞նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարգալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԵՍՏՈՒԹԵՐԸ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 - Tel/Fax:01-2583300 - facebook-ի էջ jerak Որպազ թերթ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՈՍԵՂ ԽՍ ՆՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՄԱՅԻՍ 2020

ԹԻԻ 19

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գործք 17.1-15: Ա. Յով. 1.1-10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7.14-24

ՏՕՆ ԵՐԵՄԱՆ Ա.ԽԱԶԻՆ

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին.

«Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»:

Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս դրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես իմ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք դրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ, սակայն ձեզմէ ոչ որ կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»:

Ժողովուրդը պատասխանեց. «Իրահա՞ր ես, ի՞նչ ես: Ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»:

Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեր էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեսոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէ՛ք»:

Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան, որ զինք դրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մարդ արարած պէտք է զիտակցի, թէ իր երկրատու կեանքի նպատակը Աստուծոյ կամքը կատարել է: Աստուած երբ ստեղծեց մարդը զինք դիտարկելու կարգեց իր ստացուածքներուն վրայ, զանոնք տնտեսելու նպատակով հետեւաբար մենք մեր փառքին համար պէտք չէ ապրինք, այլ Աստուծոյ փառքին եւ այն ատեն Աստուած պիտի զնահատէ մեզ:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

17.1-15

Ամփիպոլիս եւ Ապոդոնիա քաղաքները շրջել ետք Պողոս եւ Շիդա Թեսաղոնիկե եկան, ուր հրեաներու ժողովարան մը կար: Պողոս ըստ իր սովորութեան ժողովարան գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց քարոզեց: Կը բանար ու կը բացատրէր Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր, թէ ի՛նչպէս Քրիստոս պիտի չարչարուէր ու մեռնէն ետք յարութիւն առնէր, եւ կ'ըսէր. «Այն Յիսուսը գոր ես ձեզի կը քարոզեմ, ա՛ն է Քրիստոսը, խոստացուած Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ոմանք հաւատացին եւ Պողոսի ու Շիդայի յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան շատ մը աստուածապաշտ յոյներ եւ նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին եւ Յաստնի տան վրայ խուժեցին՝ Պողոսն ու Շիդան բռնելու եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ գանձեց չգտան, Յաստնն ու քանի մը ուրիշ հաւատացեալներ քաղաքէն տարին քաղաքի իշխաններուն առջեւ, պտուղով. «Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են եւ Յաստն իր տունը առեր է գիրենք: Ասոնք բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր մը կը նանչնան, Յիսուս անուանով»:



**ԸՆԴՀԱՆՐԱՍԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ**

1.1-10

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն է: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ, որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան, որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք սա է, թէ Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք «հաղորդակից ենք իրեն» եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քայլենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԵՒՍԱՆ Ա. ԽԱՉ-Ի

Յինանց հինգերորդ Կիրակին կը կոչուի Երեւման խաչ եւ յիշատակն է Երուսաղէմ՝ խաչի նշանի երեւումին:

351 թուի, Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետի ժամանակ, Երուսաղէմի մէջ օր ցերեկով երկինքի վրայ կ'երեւէ խաչի նշանը՝ Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռը: Լուսապայծառ խաչի նշանը կ'երեւէ բոլորին: Ի տես գարմանահրաշ այս երեւոյթին, ժողովուրդն ու եկեղեցականները եկեղեցի կը մտնեն Աստուծոյ գոհութիւն եւ փառք մատուցանելու համար:

Կիւրեղ եպիսկոպոսը գարմանահրաշ այս դէպքը կը տեղեկացնէ Բիւզանդիոնի Կոստանդիանոս Կայսեր, եւ անոր կը խրախուսէ քրիստոնէական իր ամուր հաւատքին համար: Կիւրեղ հայրապետի վերոյիշեալ գրութիւնը թարգմանուած է հայերէնի եւ կ'ընթերցուի Երեւման Խաչի տօնի օրը:

Երեւման Խաչի սրբոյ տօնը յատուկ է միայն հայերուն եւ յոյներուն: Կաթողիկէ եկեղեցին այս անունով խաչի տօն չունի:

Երեւման խաչի տօնը յատուկ շարական չունի, այլ նոյն օրը կ'երգեն խաչի միւս տօներու շարականները, որոնցմով կը փառաբանուի խաչը:

Իմ խօսքերս արդար են, անոնց մէջ ծուռ եւ սխալ բան չկայ: Իմաստութիւններուն համար ամէն ինչ ուղիղ է եւ շիտակ անոնց համար, որոնք գիտութիւն կը գտնեն»: Առակ 8

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ
ԽՐԱՏՆԵՐԸ**

**ՍՐԲՈՒԹԻՒՆ ՈՒ ՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ՝
ԳԻՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ**

ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ՝ ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ

Գոհութիւն յայտնենք Աստուծոյ, որ մենք եւս փրկուեցանք դեւերու բռնութենէն, թէւ ոչ մեր գործերով, այլ՝ Քրիստոսի շնորհքով եւ միջնորդութեամբ: Ոչ միայն աղօթքով յայտնենք մեր գոհութիւնը, այլեւ՝ գործով, երբ մանաւնդ այնքան արարքներով ու բազմատեսակ մեղքերով բարկացուցինք զԱստուած: Արդարեւ, ինչպէս որ չար գործերով ուրիշներու կը վնասենք, այնպէս ալ զԱստուած կը նախատենք, երբ մեղանչենք:

Մարդը Աստուծոյ պատկերն է: Ան իր պատկերը դրաւ մարդուն մէջ: Հետեւաբար, երբ մեր հոգին մեղքերով աղտոտենք, անարգած կ'ըլլանք ոչ թէ մեր հոգին, այլ՝ զԱստուած, ինչպէս Պողոս կը գրէ. «Ան որ կ'անարգէ՝ ո՛չ թէ մարդը անարգած կ'ըլլայ, այլ՝ զԱստուած, որ ինքզինք դրաւ ձեր մէջ» (Ա. Թես. Գ.8): Ինչպէս, որ մէկը դրամը աղբին մէջ նետելով ու կոխկռտելով անպատուած կ'ըլլայ ո՛չ թէ դրամը, այլ՝ դրամի վրայ գտնուող պատկերը, այնպէս ալ ո՛վ որ ինքզինք մեղքերով կ'աղտոտէ, նախատած կ'ըլլայ ո՛չ թէ իր անձը, այլ զԱստուած:

Փախչինք մեղքի մօրմէն՝ սատանայէն, ինչպէս օձէն: Ան չի համարձակիր մօտենալ մեզի եթէ չուզենք, այլ՝ ինչպէս օձը փուշին մէջ՝ նոյնպէս ինք երկրաւոր հեշտութեան մէջ կը պահուրտի եւ անով կը խաբէ մեզ: